

**Հարցաթերթ**  
**Աշխարհագրություն առարկայի 2017 թ. դպրոցական օլիմպիադայի**  
**հանրապետական փուլի (տևողությունը՝ 150 րոպե)**

**9 – րդ դասարան**

1. **Երկրի ձևի ու չափերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**-----1,5 միավոր
  1. Գնդաձևության և մեծ խտության շնորհիվ Երկրի վրա առաջանում է մակընթացություն և տեղատվություն:
  2. Արեգակի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը հասարակածային շրջաններում «փքվել» է, իսկ՝ բևեռներում՝ սեղմվել:
  3. Երկրի 60<sup>0</sup> գուգահեռականի վրա 1<sup>0</sup> աղեղի երկարությունը 111 կմ է:
  4. Երկրի բևեռային շառավղի երկարությունը 6357 կմ է:
  5. Երկրի հասարակածային շառավղի բևեռայինից կարճ է 21 կմ – ով:
  6. Երկրի գնդաձևության և մեծ խտության շնորհիվ նրա շուրջը ստեղծվում է ձգողական ուժեղ դաշտ, որն ուղղված է դեպի կենտրոն:
  
2. **Աշխարհի բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**-----1.5 միավոր
  1. Բնակչության ազգային և ռասայական կազմերի սահմանները միշտ համընկնում են:
  2. Զարգացած երկրների մեծ մասում բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
  3. Տնտեսապես զարգացած բոլոր երկրներում բնակչության խտությունը մեծ է:
  4. Բնակչության միգրացիան մեծ ազդեցություն է թողել ամբողջ աշխարհում տարբեր լեզուների և կրոնների տարածման վրա:
  5. Բնակչության վերարտադրության ամենաբարձր տեմպերը նկատվում են Լատինական Ամերիկայի երկրներում:
  6. Բնակավայրերը ոչ միայն մարդկանց բնակության, այլև արտադրական և ոչ արտադրական գործունեության կենտրոններ են:
  
3. **Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա: Նրանցից մեկը գտնվում է հս. լ. 15<sup>0</sup> – ի, իսկ մյուսը՝ հվ. լ. 32<sup>0</sup> – ի վրա: Որոշել դրանց հեռավորությունն աստիճաններով և կիլոմետրերով (պատասխանը հիմնավորել հաշվարկով)**-----2 միավոր
  
4. **Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 55<sup>0</sup> և արլ. ե. 70<sup>0</sup>: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23 – ին և հունիսի 22 – ին, կեսօրին (պատասխանները հիմնավորել հաշվարկներով)**-----2 միավոր
  
5. **Երկրի բնակչության թիվը 80 000 մարդ է, բնական աճի գործակիցը՝ 20%:**  
**Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 11 000, արտագաղթը՝ 6 000 մարդ:**  
**(Պատասխանները հիմնավորել հաշվարկներով)**-----2 միավոր
  1. Որոշել բնակչության բացարձակ աճը:
  2. Որոշել երկրի բնակչության թիվը մեկ տարի հետո:
  
6. **Դուրս գրել անօրգանական ծագման նստվածքային ապարները**-----1 միավոր  
կրաքար, մարմար, աղ, բազալտ, ավազ, կավ, տուֆ, կավիճ, տորֆ, գիպս, քարածուխ, գնեյս
  
7. **Դուրս գրել պառլամենտական հանրապետությունները**-----1 միավոր  
Հունաստան, Իրան, Ճապոնիա, Բելգիա, Մոնղոլիա, Իտալիա, Նորվեգիա, Իսպանիա, Պորտուգալիա, Մալայզիա, ԱՄՆ, Բրազիլիա:

8. Դուրս գրել միաժամանակ արևմտյան և արևելյան կիսագնդերում գտնվող պետությունները-----1 միավոր  
Իսլանդիա, Ալժիր, Բուրկինա Ֆասո, Նորվեգիա, Մալի, Ավստրիա, Թունիս, Մավրիտանիա, Պորտուգալիա, Իտալիա, Գանա, Լյուքսեմբուրգ:
9. Գրել Արևմտյան Եփրատի հովտում գտնվող դաշտերի համարները-----1 միավոր
- |             |              |
|-------------|--------------|
| 1. Ճապաղջրի | 5. Կամախի    |
| 2. Մշո      | 6. Երզնկայի  |
| 3. Կարնո    | 7. Դերջանի   |
| 4. Բասենի   | 8. Մալաթիայի |
10. Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածվում են Հյուսիսային Ամերիկայում-----1 միավոր
- |            |                 |
|------------|-----------------|
| 1. կոնյոր  | 5. բևեռային բու |
| 2. բիզոն   | 6. լեմինգ       |
| 3. կարիբու | 7. մրջնակեր     |
| 4. նանդու  | 8. պումա        |
11. Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները-----1 միավոր
- |              |             |
|--------------|-------------|
| 1. Կարկառ    | 5. Դեբեդ    |
| 2. Հագարու   | 6. Տավուշ   |
| 3. Իշխանագետ | 7. Ադստև    |
| 4. Որոտան    | 8. Մարմարիկ |
12. Ա բնակավայրի կոորդինատներն են հս. լ. 36°, արլ. ե. 56°, իսկ Բ բնակավայրին՝ հս. լ. 20°, արմ. ե. 24°: Որոշել բնակավայրերից յուրաքանչյուրի ժամային գոտին (պատասխանները ստանալ հաշվարկներով)-----2 միավոր
13. Թվարկել հերթականությամբ (սկսած առաջատար երկրից)-----2 միավոր
- սև մետաղածուլության առաջատար 4 երկրները
  - ավտոմոբիլաշինության առաջատար 4 երկրները:
14. Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով կաթոլիկ են-----1 միավոր
- |                |                 |
|----------------|-----------------|
| 1. իսպանացիներ | 5. ֆրանսիացիներ |
| 2. վրացիներ    | 6. շվեդներ      |
| 3. լեհեր       | 7. սերբեր       |
| 4. հույներ     | 8. իտալացիներ   |